British Embassy Yerevan

UNDP
Empowered lives.
Resilient nations.

oxYGen

UKaid
from the British people

WOMEN IN POLITICS
ԿԱՆԱՅՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների առաջարկություններ՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման տեսանկյունից» թեմայով

Ազգային ժողով- ՔՀԿ համագործակցության հարթակի

երկրորդ հանդիպում

Մայիսի 21-ին Երևանում կայացավ ԱԺ-ՔՀԿ համագործակցության բաց հարթակի (այսուհետ՝ «Հարթակ») երկրորդ հանդիպումը, որի օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. Հարթակի առաջին հանդիպման արդյունքների ամփոփում

2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների շուրջ քննարկում՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման տեսանկյունից:

1. Օրակարգի առաջին հարցի շրջանակում ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Լենա Նազարյանը ամփոփեց Հարթակի նախորդ՝ «Կանայք աշխատանքի շուկայում, խնդիրներ և լուծումներ» թեմայով հանդիպման արդյունքները՝ ներկայացնելով ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արձագանքն այդ հանդիպման ընթացքում քննարկված մի շարք առաջարկությունների հնարավոր օրենսդրական լուծումների վերաբերյալ:

ԱԺ-ՔՀԿ համագործակցության հարթակի առաջին հանդիպման ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Արդյունք N1

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նախնական հավանություն է տվել Հարթակի կողմից ներկայացված՝ ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող կնոջ ամուսնուն տրամադրվող մինչև երկու ամիս տևողությամբ չվճարվող արձակուրդը վճարովի դարձնելու առաջարկին: Խնդրի կարգավորումը նախարարությունը նպատակահարմար է համարել, սակայն առաջարկվում է հավելյալ քննարկումներ անցկացնել շահակիցների շրջանում՝ այդ հարցով պայմանավորված հնարավոր ֆինանսական բեռը հաշվարկելու և իրատասեկան կարգավորում տալու նպատակով:

Արդյունք N2

Նախարարությունը հավանություն է տվել Հարթակի կողմից ներկայացված առաջարկին՝ հաշմանդամություն ունեցող երեխաների և ծերերի խնամելու ժամանակահատվածը աշխատանքային ստաժում հաշվարկելու վերաբերյալ: Նշվել է, որ խնդիրը բազմիցս արծածվել է նախարարությանը հասցեագրված դիմումներում և ներկայումս քննարկվում է այս հարցի կարգավորումը անձնական օգնականների ինստիտուտի զարգացման միջոցով :

Արդյունք N3

Նախարարությունը ընդունելի չի համարել քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա աշխատանք կատարող անձի մայրության նպաստը վարձու աշխատողի համար սահմանված կարգով հաշվարկելու վերաբերյալ Հարթակի կողմից ներկայացված առաջարկությունը:

Նախարարության դիրքորոշումը տես կից հղումով http://bit.ly/2Wc5eht

Օրակարգի առաջին հարցի շուրջ քննարկման արդյունքում ՈՐՈՇՎԵՑ՝

- Հարթակի առաջին հանդիպման երեք առաջարկությունների վերաբերյալ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դիրքորոշումը քննարկելու նպատակով կազմակերպել փորձագիտական հանդիպում «ՕքսԵՋԵՆ» հիմնադրամի գրասենյակում /10.06.2019 ժամը 15:30/: Անհրաժեշտության դեպքում լրամշակել

առաջարկությունները՝ նորից ներկայացնելով նախարարությանը և շահագրգիռ կողմերին:

2. **Օրակարգի երկրորդ հարցի շրջանակում** հանդիպման մասնակից ՔՀԿ-ների ներկայացուցիչները՝ անդրադառնալով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությանը, ներկայացրեցին մի շարք առաջարկություններ՝ ուղղված համակարգում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովմանը: ՏԻՄ ընտրությունների հետ առնչվող առաջարկների մի մասը վերաբերել են նաև ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտությանը:

Հարթակի մասնակիցները, մասնավորապես, ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ՝

ՀՀ Ընտրական օրենսգրքում.

- Հաշվի առնելով ՏԻՄ համակարգում կանանց ներկայացվածության չափազանց ցածր ցուցանիշները[1] ընդլայնել համամասնական ընտրակարգով ավագանիներ ձևավորող համայնքների շարքը՝ ներառելով հանրապետության քաղաքային և խոշորացված համայնքները:

- Վերանայել ՀՀ Ընտրական օրենսքրքի հոդված 83-ի 4-րդ կետով սահմանվող կուսակցությունների ցուցակներում սեռերի ներկայացվածության քվոտան՝ փոխարինելով գործող ձևակերպումն այլ՝ «կուսակցությունների համամասնական ցուցակներում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 60 տոկոսը», ձևակերպմամբ և տարածել այդ շեմը համամասնական ընտրակարգով իրականացվող ՏԻՄ ընտրությունների վրա:

[1] Համայնքների ղեկավարների թվում կանայք ընդամենը 1.6 տոկոս են կազմում, ավագանիներում կանանց ներկայացվածությունը 9.3 տոկոս է, ընդ որում հանրապետության 502 համայնքից 275-ի ավագանիների կազմում կանայք ընդհանրապես ընդգրկված չեն :

- Համամասնական ՏԻՄ ընտրություններին անցնելուն մեկտեղ դիտարկել նաև քաղաքացիական նախաձեռնությունների առաջադրման հնարավորությունը,

- Նվազեցնել կուսակցությունների և դաշինքների ավագանու կազմում ներգրավվելու ընտրական անցողիկ շեմը

- Հստակեցնել և ընդլայնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և տարածքային ընտրական հանձնաժողովների պարտավորությունները և գործառույթները ընտրությունների և նրանց ընթացակարգերի մասին բնակչության լայն իրազեկումն ապահովելու ուղղությամբ:

- Օրենսդրորեն ամրագրել ԿԸՀ-ի պարտավորությունը հավաքագրել և հրապարակել ցանկացած ընտրություններին վերաբերող բոլոր տվյալները սեռի սկզբունքով տարանջատված, ինչպես նաև ներառել գենդերային բաղադրիչը ընտրությունների կազմակերպման և անցկացման համար պատասխանատու բոլոր մարմինների աշխատանքում:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում

- Համայնքների հնգամյա զարգացման ծրագրերը փաստարկված կազմելու և նրանց գենդերային զգայնությունը ապահովելու նպատակով ամրագրել օրենքում պահանջը՝ մինչ ծրագրերի մշակումը համայնքային կարիքների բացահայտման հետազոտությունների, այդ թվում գենդերային վերլուծությունների անցկացման մասին:

- Սահմանել խրախուսման գործիքակազմեր, մասնավորապես՝ նախատեսել «Լավագույն ավագանի կամ լավագույն ավագանու անդամ» ամենամյա մրցանակաբաշխության անցկացումը, համայնքների ավագանիների անդամների նկատմամբ խրախուսման միջոցների կիրառումը (օրինակ՝ սոց. փաթեթների տրամադրում, զեղչի քարտերի տրամադրում և այլ արտոնություններ): Խրախուսման միջոցներ նախատեսել նաև գենդերային հիմնախնդիրների լավագույն լուծումներ ապահովող համայնքների համար:

- Օրենսդրորեն սահմանել ավագանու անդամի ծախսերի փոխհատուցման ընթացակարգը և հաշվարկման օրինակելի մեխանիզմները: Նաև «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում ավագանու անդամների համար առողջապահական սուբսիդիաներ ստանալու հնարավորություն ամրագրել:

- Ներդնել ավագանու անդամի և համայնքի ղեկավարի ետկանչի գործուն մեխանիզմ:

- Հստակեցնել և ընդլայնել խոշորացված համայնքների վարչական ղեկավարների լիազորությունները:

- Համայնքի ղեկավարներին կից խորհրդակցական մարմիններում ապահովել կանանց և տղամարդկանց 50/50 ներկայացվածություն՝ սահմանելով օրենքով, որ այդ մարմինների կազմավորման կարգերը մինչև համայնքի ավագանու հաստատմանն ներկայացնելը պետք է դրվեն պարտադիր հանրային քննարկման:

- Խմբագրել համայնքի ավագանու նիստերի մասին տեղեկացմանը վերաբերող օրենքի պահանջը՝ սահմանելով, որ ավագանու օրակարգի նախագիծը փակցվում է համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում՝ անկախ բնակչության թվաքանակից, բնակիչների համար մատչելի և տեսանելի վայրերում:

- Հաշվի առնելով բազմաբնակավայր համայքների համար ավագանու նիստերի առցանց հեռարձակման կարևորությունը, օրենսդրորեն ամրագրել նիստերի ուղիղ հեռարձակման մասին պահանջը՝ սկսած 3000 և ավել բնակիչ ունեցող համայնքների համար:

- Բնակչության մասնակցության նվազագույն շեմ սահմանել հանրային քննարկումների և լսումների համար՝ այդ միջոցառումների առցանց հեռարձակում ապահովելով 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների դեպքում:

- Ներդնել գենդերային բյուջետավորման մեխանիզմներ համայնքային բյուջեների ձևավորման գործընթացում: Օրենքով սահմանել կարգավորումներ, որոնց համաձայն ՏԻՄ-երի տարեկան բյուջեյի 1 տոկոսը ուղղված կլինի երիտասարդների կողմից համայնքային նախաձեռնությունների իրականացմանը:

- Սահմանել օրենքով, որ համայնքի ղեկավարը և ավագանու անդամները ընտրվելուց 10 օր անց պետք է պարտադիր մասնակցեն համապատասխան վերապատրաստման (ատեստավորման):

ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023թթ. ռազմավարությունով և միջոցառումների ծրագրում.

- Նախատեսել կանանց քաղաքական մասնակցության խթանմանն ուղղված հստակ գործողություններ և միջոցառումներ, ներառելով ՏԻՄ համակարգում կանանց ներկայացվածության բարձրացման տեսլականը,

- Կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի կատարելագործման շրջանակում հստակեցնել մարզային և համայնքային կառույցների գործողություններն այդ ուղղությամբ:

Հարթակի հանդիպմանը ներկայացված և քննարկված վերոնշյալ և այլ առաջարկությունների ողջ փաթեթը կցվում է.

Հ. Գ. Հանդիպման ընթացքում նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել Հարթակի հաջորդ հանդիպումը կանանց վերարտադրողական առողջության թեմայով անցկացնելու մասին: